«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Բարոյական դաստիարակություն
ԱՌԱՐԿԱ	Տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ	Պետրոսյան Նաիրա
ՄԱՐԶ	Արագածոտնի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Մելիքգյուղի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1 ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.....4

1.2 ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....7

1.3 ԲԱՐՈՅԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժության ուսումնասիրության առարկան բանական մարդն է՝ homo sapiens-ը: Մարդու զարգացման, կայացման, աշխարհայացքի ձևավորման գործում իրենց ազդեցությունն ունեն մի շարք գործոններ: Այդ գործոններից մեկն էլ հանդիսանում է դաստիարակությունը, որը բավականին մեծ ընդգրկում ունեցող հասկացություն է: Բարոյական դաստիարակության հիմնական էությունը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է:

Ստորև ներկայացվող աշխատանքում անդրադարձել ենք բարոյական դաստիարակությանը, նրա ընդհանուր բնութագրին, սահմանումներին, նրա շուրջ առկա մի շարք կարծիքներին ու տեսակետներին:

Աշխատանքում ներկայացրել ենք Պեստալոցցու, Խառլամովի, Ուշինսկու, Մակարենկոյի և այլոց կողմից առաջ քաշված սահմանումները, բարոյական դաստիարակության հիմնական խնդիրներն ու նպատակը:

Խուսել ենք դեռահասության տարիքում երեխայի վրա բարոյական դաս–տիարակության ներգործության և ազդեցության մասին:

Աշխատանքում անդրադարձ է կատարվել նաև կրոնի դերին, նրա ունեցած ազդեցությանը մարդու բարոյական նկարագրի, աշխարհաճանաչողության և արժեհամակարգի ձևավորման վրա:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումը կախված են տվյալ երկրի սոցիալական պայմաններից, այն հանրությունից, որում նա ապրում և գործում է: Եթե դրանք իրենց բարձրության վրա չեն գտնվում, եթե չկան նյութական, բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, քաղաքական առողջ մթնոլորտ, քաղաքակրթություն, ապա այնտեղ անձի բարոյականությունն ու բարոյական զարգացումը կայուն լինել չեն կարող:

Ինչպես բարոյական վարքի սովորույթների դաստիարակումը, այդպես էլ բարոյական գիտակցման ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով: Դրանց միջոցով է դաստիարկ-ուսուցիչը հասնում այն բանին, որ երեխաները գիտելիքներ յուրացնեն բարոյականության և նրա կանոնների մասին, նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությանների և արժեքների համակարգ:

Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է: Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքում: Բարոյական զարգացմանը նպաստում են անձի շփումները, հաղորդակցումները, որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողութ–յունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը: Հատկանշական է, որ բարոյական դաստիարակության կայացման վրա ներգործող ազդեցություն ունեն նաև բարոյական որակները: Այդպիսիք կարող են հանդիսանալ հայրենասիրությունը, ազգասի–րությունը, անձնազոհությունը և այլ, որոնք էլ հենց հիմք են դնում ազգային արժեհամակարգի, ազգային մտածողության և պատմական հիշության արմա–տավորման և պահպանման համար: Առանց պատմական հիշողության ժողովուրդ չկա: Հովհ. Թումանյանը գրում է. «Անցյալի պատմությունը մի լուսավոր լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար»: Հայրենիքը նախնառաջ հող է՝ կենսատարածք, որը հնարավորություն է տալիս ազգին գոյատևելու և զարգանալու ժամանակի պահանջներին համընթաց: Հայրե–նասիրությունը (հունարեն patre-հայրենիք), իրենց երկրի հանդեպ մարդկանց

վերաբերմունքը բնորոշող հասարակական և բարոյական որակ է, որը դրսևորվում է որոշակի եղանակով գործողությունների և հասարակական զգացմունքների ամբողջությամբ[1]:

Հայրենիքը սկսվում է տնից, հողից, ջրից: Թե՛ ընտանիքը, թե՛ դպրոցը պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Դպրոցում այն պետք է ապահովվի հիմնականում կրթության բովանդակության միջոցով: Երեխան պետք է հարգի և սիրի իր ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սովորույթներն ու մշակույթը, ճանաչի իր ազգային արժեքները, չէ՞ որ անձը իր վարքի համար հիմք է ընդունում էթնոսի պատմությունն ու մշակույթը:

Բարոյական դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, այլև նրա կարևոր գործառնությունն է, հասարակությանն այնպիսի մարդու հավելումը, որը մշտապես կկատարի բարոյական գործողություններ ու արարքներ՝ հօգուտ հասարակության և հօգուտ մարդու:

Բարոյական արժեքներով դաստիարակված մարդը առաքինի է, բարեկիրթ: Այդպիսի մարդու նիստուկացը, գործողություններն ու արարքները, մարդկանց հետ հարաբերություններն, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը, յուրահատուկ են և օրինակելի: Բարոյական զարգացումից զուրկ մարդը հասարակության համար անտանելի բեռ է:

Մարդկային հասարակության մշակութային գանձարանում դաստիա–րակության գործընթացը հիմնականում ընկալվել է մարդասիրական նկատա-ռումներով, թեև քիչ չեն դեպքերը, երբ համամարդկայնորեն մերժված որոշ գաղափարներ ու տեսություններ հաջողությամբ իրականացրել են իրենց նպատակային դաստիարակչական ներգործությունը:

Բարոյական դաստիարակության մեջ իր անուրանալի դերն ու տեղը ունի կրոնը: Քրիստոնեական դաստիարակության հիմքում ընկած է բարոյական դաս–տիարակությունը: Ինչպես ճիշտ նկատել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը. «Դաստիարակությունը երեխայության շրջանին կը սկսի ցանել, պատանեկության շրջանին կը մշակե՝ հասուն մարդոց կյանքեն քաղելու համար»:

---

[1] Տե՛ս Ամիրջանյան Յու., Սահակյան Տ., Մանկավարժություն, (Այսուհետ՝ Մանկավարժություն...) Երևան, 2001, էջ 357:

Ժողովրդի ու երկրի փրկությունը ներքին բարոյականության մեջ է, երբ հասարակությունը զուրկ է դրանից, որքան էլ որ նա ունենա հզոր պարիսպներով ու աշտարակներով ամրացված շեն քաղաքներ՝ անխուսափելիորեն անկում կապրի: Բարոյականությունը, սրբությունն ու աստվածապաշտությունը կարող են միավորել հասարակությունը, առողջացնել այն միասնությամբ ու միաբանությամբ, որով կարելի է դիմակայել աղետներին[2]:

Անկախ դաստիարակության գործընթացի լայնածավալ ընդգրկման, այն նպատակային գործընթաց է, դեպի լավը վերափոխելու մարդուն կամ մարդկանց: Դեռևս, Ք. ա. V-IV դարերի մտածողները գտնում էին, որ ոչ մեկը պատահականորեն չի դառնում լավ մարդ, դրա համար անհրաժեշտ է նպատակային դաստիարակչական ներգործություն, որը, իբրև նպատակային գործընթաց, իր մեջ ամփոփում է նպատակի և բովանդակության, սկզբունքների, մեթոդների, ձևերի, միջոցների ու ստացված արդյունքների՝ ուղղակի և հակադարձ կապերի փոխկապվածություն:

[2] Տե՛ս https://vilashes.ru/hy/nravstvenno-duhovnoe-vospitanie-kak-osnova-stanovleniya-lichnosti.html, Բարոյական և հոգևոր կրթությունը՝ որպես երիտասարդ սերնդի անձի ձևավորման հիմք, /30.07.22/

2. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բարոյական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ են դասվում անձի գիտակցության, զգացմունքների ու վարքի ձևավորումը: Երկրորդ խմբի մեջ են մտնում բարոյական բարձր որակները՝ հումանիզմը, կոլեկտիվիզմը, հայրենասիրությունը, գիտակցական կարգապահությունը, քաղաքացիական դաստիարակությունը և այլն[3]:

Հմուտ ուսուցիչը պետք է բարոյական դաստիարակության ուղիներ որոնի, աշակերտների մեջ ձևավորի բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնելու կարողություններ: Նա իր օրինակով պետք է բարություն ու համեստություն սերմանի:

Շատ կարևոր են բարոյական թեմաներով զրույցները: Նախօրոք լավ մշակված հարցերի միջոցով կարելի է քննարկել որևէ անձի վարքագիծը, բնավորության գծերը, արարքները, վերլուծել որևէ կինոնկար, կարդացած վեպի հերոսների հոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Ժամանակակից դասակարգմամբ բարոյական դաստիարակության խնդիրները բաժանվում են երկու խմբի.

- խնդիրներ, որոնք ուղղված են բարոյական դաստիարակության մեխանիզմի բաղադրատարրերի ձևավորմանը,
- խնդիրներ՝ ուղղված անձնային բարոյական հատկությունների ձևավորմանը:

Առաջին խմբի խնդիրները կայուն են և անփոփոխ և նպաստում են երեխայի մեջ բարոյականության յուրաքանչյուր բաղադրիչի ինքնուրույն ձևավորմանը: Երկրորդ խմբի խնդիրներն իրենց բնույթով փոփոխական են ու շարժուն, դրանք բնորոշում են տվյալ հասարակության պահանջները՝ վաղվա քաղաքացու անձնային որակների ձևավորման ուղղությամբ: Եթե նախկինում հասարակությունն առավել կարևորում էր հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի, աշխատասիրության և կոլեկտիվիզմի դաստիարակությունը, ապա հասարակության զարգացման ներկա ժամանակա-հատվածում շեշտադրվում են այնպիսի անձնային հատկություններ, ինչպիսիք են՝ մարդասիրությունը (բարությունը) և հանդուրժողականությունը, ձեռներեցությունը և կյանքի հանդեպ ակտիվ դիրքորոշումը, ստեղծագործական ընդունակությունները և

[3] Տե՛ս Մանկավարժություն..., էջ 359:

կրեատիվ-ստեղծարար դիրքորոշումը, ինքնասիրությունն ու արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունն ու համագործակցելու կարողությունները, քաղաքացիական հատկությունները, այսինքն՝ այն ամենը, ինչ հանգեցնում է սոցիալական զգացմունքների զարգացմանն ու ձևավորմանը[4]:

[4] http://shsu.am/media/journal/2019n2b/35.pdf, Բարոյական դաստիարակությունը որպես սոցիալական զգացմունքների ձևավորման միջոց ավագ նախադպրոցական տարիքում (Այսուհետ՝ Բարոյական դաստիարակությունը որպես...), /30.07.2022/, էջ 381:

3. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բարոյական դաստիարակության ուղիներն ու միջոցները ունեն իրենց յուրահատկությունն աշակերտների բարոյական լուսավորության մեջ, նրանց կոլեկտիվ կյանքում, հաղորդակցման, համատեղ գործունեության մեջ՝ հատուկ աշխատանք կազմակերպելիս, բարոյական սովորություններ դաստիարակելիս և բարոյական զգացմունքներ ձևակերպելիս:

Բարոյական լուսավորությունը կատարում է մի քանի դաստիարակչական գործառույթներ.

- Նպաստում է դպրոցականների սեփական բարոյական փորձի իմաստավորմանը և հարստացմանը,
- Ճշտում է բարոյականության բնագավառի գիտելիքները, որոնք ձեռք են բերվել տարբեր աղբյուրներից,
- Նպաստում է անձի բարոյական ինքնադաստիարակությանը[5]:

Այն կազմակերպելիս պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները, անհատական, բարոյական փորձը, բարոյական նորմերին տեղյակության աստիճանը, բարոյական գիտելիքները: Բարոյական լուսավորությունը արդյունավետ է այն դեպքում, երբ բարոյականության բնագավառի գիտելիքները ուղեկցվում են բարոյագիտական ապրումներով:

Բարոյական լուսավորությունը նպաստում է բարոյական պահանջներին և տրամաբանական փաստարկներին դպրոցականներին ծանոթացնելուն: Դրանք հիմնավորում են, թե ինչու է անհրաժեշտ այդ պահանջները պահպանել: Անձի բարոյական զարգացումը ընդգրկում է բարոյական պահանջմունքների ձևավորումը պահանջմունք աշխատանքում, հաղորդակցման, մշակութային արժեքների յուրացման, իմացական ընդունակությունների զարգացման մեջ և այլն: Այդ պահանջմունքները զարգանում են դպրոցականների գործունեության ռեալ փորձում ու հարաբերություններում, նրա մոտ ձևավորում վարքի սոցիալապես օգտակար հմտություններ, բարոյական սովորույթներ, կայուն հարաբերություններ:

---

[5] Տե՛ս https://forum.armedu.am/forum, Անահիտ Բաղդասարյան, Բարոյական դաստիարակություն, /01.08.2022/:

Բարոյական դաստիարակության տեսական հիմքերը բխում են բարոյագիտությունից, որն ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի չափանիշներ՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Բարոյականությունը բարոյական վարքի, նորմերի և կանոնների գիտակցման աստիճան է, ներքին սուբյեկտիվ դիրքորոշում աշխարհի հանդեպ: Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է. այն դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

•Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացակամ վերաբերմունքով արտաքին աշխարհի նկատմամբ:

•Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում:

•Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ:

•Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ[6]:

Խթանելով բարոյական արժեհամակարգի ու վարքի եղանակների առաջացումը, դաստիարակ-ուսուցիչը պետք է.

- ստեղծի պայմաններ գործողության այս կամ այն եղանակի բարոյական ընտրության իրագործման համար,
- հասկանա դպրոցականի բարոյական պահանջմունքների զարգացման մեջ ծագող հակասությունների պատճառը, բնույթը, նպաստի դրանց դաստիարակչական առումով ավելի արդյունավետ լուծմանը,
- ներգործի այն անձանց վրա, որոնք կազմում են երեխայի մերձակա միջավայրը:

Բարոյական սովորույթների դաստիարակման համար հաջողությամբ կարելի է կիրառել խաղը, քանի որ երեխայի համար խաղն ունի այն նշանակությունը, որը մեծահասակների կյանքում ունեն աշխատանքը, ծառայությունը, հասարակական գործունեությունը: Ինչպիսին է երեխան խաղում, այդպիսին է լինում նաև

[6] Բարոյական դաստիարակությունը որպես..., էջ 382:

աշխատանքում, երբ մեծանում է: Ահա թե ինչու ապագա մարդու դաստիարակումը նախևառաջ սկսվում է մանկական խաղերից:

Բոլոր ժամանակներում էլ տարածված է եղել «Բարոյական դաստիարակություն» հասկացության որոշակի հակասական և ոչ միանշանակ ըմբռնում:

Ըստ Պեստալոցցու՝ բարոյական դաստիարակությունը դաստիարակության գործընթացի առանցքն է: Դաստիարակության հիմնական խնդիրն է ձևավորել ներդաշնակորեն զարգացած մարդու, որը պետք է արդյունավետ մասնակցություն ունենա հասարակության կյանքին: Երեխայի բարոյական վարքի հիմքերը դրվում են ընտանիքում, իսկ բարոյական ուժերի հետագա զարգացումը իրագործվում է դպրոցում: Ընդ որում՝ բարոյական վարքագիծը ձևավորվում է ոչ թե բարոյախոսության միջոցով, այլ երեխաների մոտ բարոյական զգացումներ և բարոյական հակումներ զարգացնելու շնորհիվ:

«Իդեալական մարդը» միայն հոգեբանորեն զարգացած «անհատականություն» չէ, այլ բարոյական անձնավորություն, որը զգում է իր միասնությունը հասարակության և ամբողջ մարդկության հետ ընդհանրապես:

Ըստ Խառլամովի դիրքորոշման՝ բարոյական դաստիարակությունը գիտակցաբար իրականացվող գործընթաց է՝ միտված սովորողների մեջ բարոյական դրական հատկանիշների ձևավորման, դպրոցում կազմակերպվող բազմաբնույթ ուսումնական և արտադասարանային գործունեության համակարգում, որի արդյունքում ձևավորվում են նաև համապատասխան անձնային-բարոյական հատկանիշներ:

Մակարենկոն իր մանկավարժական երկերում բազմիցս շեշտում է բարոյական դաստիարակությունը՝ այն դիտարկելով որպես հասարակության մեջ մարդու դաստիարակության օբյեկտիվ-օրինաչափ գործընթաց[7]:

Ուշինսկին դաստիարակությունը բնորոշում է որպես ներդաշնակորեն զարգացած անձնավորության ձևավորմանը նպատակաուղղված գիտակցական պրոցես: Դաստիարակության տարբեր կողմերի շարքում նա գլխավոր տեղը հատկացնում է բարոյականության դաստիարակությանը, որովհետև, ըստ նրա,

[7] Մակավարժություն..., էջ 356-357

բարոյական դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի մարդասիրություն, ազնվություն և ուղղամտություն, աշխատասիրություն, կաարգապահություն և պատասխանատվության զգացմունք, որը զուգակցվում է համեստության հետ: Դաստիարակությունը երեխայի մեջ պետք է զարգացնի ամուր բնավորություն և կամք, տոկունություն, պարտքի զգացմունք[8]:

Զանազան տեսակետների վերլուծությունը մեզ հանգեցնում է այն համոզմանը, որ բարոյական դաստիարակության տարբեր սահմանումների մեջ ընդհանուրն այն է, որ դրանք բոլորը հանգում են հետևյալ բնութագրմանը, որ բարոյական դաստիարակությունը նպատակաուղղված և համակարգված ներգործությունն է անձի գիտակցության, զգացումների ու վարքի վրա՝ նրա մեջ այնպիսի բարոյական հատկանիշներ ձևավորելու նպատակով, որոնք համապատասխանում են հասարակության բարոյական պահանջներին: Այս համատեքստում առավել նշանակալի է ոչ թե ուսուցչի ներգործությունն աշակերտի վրա, այլ նրանց փոխներգործությունը: Այդ դեպքում տեղի է ունենում ոչ միայն տեղեկատվության, այլև արժեքների, կենսագործունեության ձևերի, նորմերի, բարոյական համոզմունքների փոխանակում, որոնց ընտրությունը և գերակայությունը կախված է դաստիարակության կազմակերպման սոցիալ-հոգեբանական այն մթնոլորտից, որտեղ իրականանում է այդ փոխներգործությունը[9]:

Մանկավարժը պետք է իմանա, թե կրտսեր կամ դեռահասության տարիքներում բարոյական ի՞նչ որակներ սերմանի: Նա պետք է կարողանա գտնել բարոյական զարգացման առանցքն ու հիմքը:

Դեռահասության տարիքում երեխան ամենուր է՝ տանը, դպրոցում, բակում, թաղամասում, հասակակիցների շրջապատում և այլն: Այս վայրերում էլ նա ձեռք է բերում մերձավոր շրջապատի միջավայրը յուրացնելու փորձ:

Դեռահասի համար այս տարիքում մեծ նշանակություն ունի օրինակի ուժը: Նա դառնում է յուրօրինակ հետաքրքրասեր՝ առաջին հերթին իրեն շրջապատող մարդկանց նկատմամբ: Նրանց մեջ հայտնաբերում է այնպիսի որակներ, որոնք ինքը

---

[8] Տե՛ս https://forum.armedu.am/forum, Անահիտ Բաղդասարյան, Բարոյական դաստիարակություն, /01.08.2022/:

[9] Տե՛ս https://vilashes.ru/hy/nravstvenno-duhovnoe-vospitanie-kak-osnova-stanovleniya-lichnosti.html, Բարոյական և հոգևոր կրթությունը՝ որպես երիտասարդ սերնդի անձի ձևավորման հիմք, /30.07.22/

չունի, դրա համար կողմնորոշվում է դեպի նրանց օրինակը: Այստեղ մանկավարժի խնդիրն է դրական, բարոյական օրինակի ձևավորումը և բացասական արարքներից աշակերտներին ետ պահելը, իսկ դրան նա պետք է հասնի իր ճիշտ կողմնորոշման, մանկավարժական տակտի, վարպետության և հեղինակության շնորհիվ:

Դեռահասության տարիքում ուսուցիչը իր սանին կողմնորոշում է բոլոր արարքներում, ապա օգնում նրան յուրացնելու բարոյական զարգացմանն ու բարոյական հասկացություններին վերաբերող գիտելիքներ, դրանք դարձնում նրա համոզմունքները, խորհուրդներ ու ցուցումներ է տալիս դեռահասին, թե ինչպես կիրառել և իրացնել դրանք կյանքում:

Հմուտ մանկավարժը, օգտագործելով ուսումնական առարկաների բոլոր հնարավորությունները, պատանուն կարող է զինել բարոյականությանը վերաբերող տեսական գիտելիքներով: Նա կարող է կազմակերպել բարոյական թեմաներով զրույցներ, դասախոսություններ և բանավեճեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքում խոսեցինք բարոյական դաստիարակության, նրա էության, խնդիրների և նպատակների մասին: Ծանոթացանք բարոյական դաստիա–րակության ընդհանուր բնութագրին, բարոյական լուսավորության կատարած մի քանի դաստիարակչական գործառույթներին:

Ներկայցրեցինք բարոյական դաստիարակության մի քանի առավել էական սահմանումներ՝ ըստ Պեստալոցցու, Խառլամովի, Ուշինսկու, Մակարենկոնի: Փորձեցինք ներկայացնել կրոնի, և ընդհանրապես, քրիստոնեական դաստիա–րակության և բարոյական դաստիարակության փոխկապակցված լինելը:

Քննարկելով բարոյական դաստիարակության շուրջ առկա կարծիքներն ու սահմանումները, տվեցինք բարոյական դաստիարակության ընդհանուր բնութագիրը, անդրադարձանք դաստիարակ-ուսուցչի կողմից իրականացվող գործողությունների կարևորությանն ու սովորողի վրա ունեցող ազդեցությանը:

Այսպիսով՝ եկանք այն եզրակացությանը, որ բարոյական դաստիարակությունը՝ բարոյական արժեքների հիման վրա կառուցված բազմաբնույթ գործունեության ընթացքում, ուսուցչի և աշակերտի նպատակաուղղված փոխներգործությունն է՝ անձի բարոյական հատկանիշների ձևավորման նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Տ., Մանկավարժություն, Երևան, 2001:
2. https://forum.armedu.am/forum, Անահիտ Բաղդասարյան, Բարոյական դաստիարակություն, /01.08.2022/:
3. http://shsu.am/media/journal/2019n2b/35.pdf, Բարոյական դաստիարակությունը որպես սոցիալական զգացմունքների ձևավորման միջոց ավագ նախադպրոցական տարիքում, /31.07.2022/
4. https://vilashes.ru/hy/nravstvenno-duhovnoe-vospitanie-kak-osnova-stanovleniya-lichnosti.html, Բարոյական և հոգևոր կրթությունը՝ որպես երիտասարդ սերնդի անձի ձևավորման հիմք, /30.07.22/